ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«07» 06 2012թ. N 129-12

Ձեր 01 հունիսի 2012թ.
01/3-1/5282-12 գրության

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի նախագահ
պարոն Գ. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չունենք:

Առդիր՝ 1 էջ:

Ա.Գրիգորյան

Կատ.իրավաբանական վարչություն հեռ.58 16 80
0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. + 374 10 52 68 31 ֆաքս + 374 10 54 31 60 էլ.փոստ: http://mss@mss.am

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ ՆԱԽԱԳԱՀ
6350-12
08 JUN 2012 թ.

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին>> N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծը ունի չեզոք ազդեցություն: